



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2017 թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՍԱՀՄԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շիրակցիներ

Ի սրտե շնորհավորում եմ Սահմանադրության օրվա կապակցությամբ:

Յուրաքանչյուր պետության համար Սահմանադրությունն անկախ պետականության կարևորագույն խորհրդանիշներից է: Այն կայուն հիմք է երկրի զարգացման և ժողովրդավարության ամրապնդման համար:

Մայր օրենքը երաշխավորում է մեր բոլորի հավասարությունն օրենքի առջև, ապահովում քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, պահպանում սոցիալական կայունությունն ու ներդաշնակությունը:

Կրկին շնորհավորելով տոնի առթիվ՝ մաղթում եմ բոլորիս քաջառողջություն, տոկունություն՝ հանուն մեր երկրի, Շիրակ աշխարհի:

Վստահ եմ՝ սահմանադրական արժեքների ու նորմերի հետագա ամրապնդումը կդառնա մեր ապագա հաջողությունների և ձեռքբերումների հուսալի երաշխիքը, մեր ապրելակերպի և գործունեության հիմնասյունը:

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ